ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-419-19.12.2013,20.12.2013-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-222-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» ենթակետերում գումարներն ավելացնել 63.3-ական մլրդ դրամով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածով հաստատված ծախսերի և դեֆիցիտի գումարներն ավելացնել 63,333,900.0 - ական հազար դրամով:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

հազար դրամներով

Պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները	Մուտքերի գումարների փոփոխություն (ավելացումները բերված են դրական նշանով)
ԸՆԴԱՄԵՆԸ	63,333,900.0
այդ թվում՝	
Ա.Ներքին աղբյուրներ	63,333,900.0

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

հազար դրամներով

Բաժին	Խումբ	Դաս		Հատկացումների գումարների փոփոխություն (ավելացումները նշված են դրական նշանով)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	63,333,900.0
			այդ թվում՝	
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	63,333,900.0
			այդ թվում՝	
	03		Վառելիք և էներգետիկա	63,333,900.0
		02	Նավթամթերք և բնական գազ	63,333,900.0

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

հազար դրամներով

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հատկացումների գումարների փոփոխություն (ավելացումները նշված են դրական նշանով)
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	63,333,900.0
այդ թվում՝	
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	63,333,900.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
այլ ծախսեր	63,333,900.0

Հոդված 6. Օրենքի N 1 և N 4 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն սույն օրենքի համապատասխանաբար N 1 և N 2 հավելվածների:

Հոդված 7. Օրենքի 9-րդ հոդվածը՝

1) 1-ին մասում՝ «իրականացումը» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 4-րդ հավելվածով նախատեսված, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի իրացումից ստացված մուտքերի և 1-ին հավելվածով նախատեսվող «Ներմուծված գազի դիմաց փոխհատուցում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին» ծախսային ծրագրի գծով կատարվող գործառնությունների» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15-րդ մասով.

«15) «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը ազատվում է գազի ձեռքբերման գործարքներից «Գազպրոմ էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ ձևավորված պարտքը մարելու նպատակով 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվող՝ 63,333,900.0 հազար դրամ գումարի մասով առաջացող ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորությունից:»:

Հոդված 8. Սույն օրենքի NN 1-2 հավելվածները համարվում են սույն օրենքի անբաժանելի մասերը:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ԱՂՅՈՒՍԱԿ N 1

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Հատկացումների գումարների փոփոխություններ (ավելացումները բերված են դրական նշանով)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ այդ թվում՝	63,333,900.0
	03		Վառելիք և էներգետիկա այդ թվում՝	63,333,900.0
		02	Նավթամթերք և բնական գազ	63,333,900.0
			01. Ներմուծված գազի դիմաց փոխհատուցում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին	63,333,900.0
			ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	63,333,900.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ԱՂՅՈՒՍԱԿ N 2

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 04-03-02 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Հոդվածի անվանումը	Հատկացումների գումարների փոփոխություններ (ավելացումները բերված են դրական նշանով)		
	Ընդամենը դասի գումարը (հազար դրամներով)	այդ թվում՝ ըստ ծրագրերի	
		Ներմուծված գազի դիմաց փոխհատուցում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին	
		Ընդամենը ծրագրով	այդ թվում՝ ըստ կատարողների
			ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում	63,333,900.0	63,333,900.0	63,333,900.0
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում	63,333,900.0	63,333,900.0	63,333,900.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0	63,333,900.0	63,333,900.0
այլ ծախսեր	63,333,900.0	63,333,900.0	63,333,900.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ԱՂՅՈՒՍԱԿ N 3

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

հազար դրամներով

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հատկացումների փոփոխություններ (ավելացումները բերված են դրական նշանով)
15. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	63,333,900.0
02. Ներմուծված գազի դիմաց փոխհատուցում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին այդ թվում՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման	63,333,900.0
Բաժին N 04 Խումբ N 03 Դաս N 02	63,333,900.0
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
այլ ծախսեր	63,333,900.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ» ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ N 4 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

հազար դրամներով

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	Մուտքերի գումարների փոփոխություն (ավելացումները բերված են դրական նշանով)
ԸՆԴԱՄԵՆԸ	63,333,900.0
այդ թվում՝	
Ա. Ներքին աղբյուրներ-ընդամենը	63,333,900.0
այդ թվում՝	
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	63,333,900.0
այդ թվում՝	
2.1. Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության իրացումից մուտքեր	63,333,900.0